

ՄԵՐԻ ՍԱՂՅԱՆ, Ռափայել Պատկանյան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն,
Երևան, 1980, 282 էջ:

Ռաֆայել Պատկանյանի ծննդյան 150-ամյակի օրերին լույս տեսավ բանասեր Մերի Սաղ-
յանի մենագրությունը՝ նվիրված մեծ բանաստեղծի կյանքին և գործունեությանը, Թեև Պատ-
կանյանի ստեղծագործությունը բավականաչափ լավ է ուսումնասիրված, բայց նույնը չի կա-
րելիս ասել նրա կյանքի և գործունեության վերաբերյալ: Սաղյանի աշխատությունը գալիս է
լրացնելու այդ բացը:

Սուգիին տպավորությունը, որ թողնում է գիրքը, Պատկանյանի կյանքի փաստերի՝ հնդի-
նակի լավատեղիությունն է: Երկար տարիներ զբաղված լինելով Պատկանյանի երկերի
ուսումնասիրությամբ, որոնց ակադեմիական հրատարակության որոշ հատորների կազմողը
է ծանոթագրությունների հնդինական է, Մ. Սաղյանը մեծագույն բարեխղճությամբ հանրագու-
մարի է բերել ինչպես պատկանյանագիտության բնագավառի բոլոր ձեռքբերումները, այնպես
էլ, շրջանառության մեջ գնելով նորահայտ բազմաթիվ փաստեր, ստեղծել է մեծաթեք մի աշ-
խատանքություն՝ Պատկանյանի գիտական կենսագրությունը:

Աղխատության ուշագրավ բաժիններից է Պատկանյանի կյանքի վաղ շրջանի նկարագրումը, որը ներկայացված է գրքի առաջին երկու գլուխներում: Մեր բանասիրական զրակա-
նության մեջ գրեթե բացակայում էին անհրաժեշտ տվյալներ Պատկանյանի՝ Թիֆլիսում անց-
կացրած տարիների, ներսիայան դպրոցում նրա կատարած աշխատանքի և «Արարատ» ամ-
սագրին ունեցած մասնակցության վերաբերյալ: Այս գլուխներում բերված հարուստ նյութերը
հնարավորություն են տալիս ընթերցողին՝ հետևելու Պատկանյան-գործչի գաղափարական զար-
գացման և հասարակական գործունեության ընթացքին՝ նրա կյանքի վաղ տարիներին: Այս
առումով պակաս հետաքրքրական չեն նաև երրորդ ու չորրորդ գլուխներում ներկայացված
Պատկանյանի ուսումնառության հանգամանալից պատմությունը՝ Դորպատի, Մոսկվայի և Պե-
տերբուրգի համալսարաններում:

Մենագրության երկրորդ մասում Մ. Սաղյանն առանձնահատուկ ուշադրություն է դարձրել Գամառ-Փաթիպա ընկերության կամ, այսպես կոչված, «Ուխտի» կազմավորմանը և գործունեությանը։ Հեղինակը քայլ առ քայլ ներկայացնելով Պատկանյանի աղգանվեր գործունեությունը, հանգում է այն երրակացության, որ նա ազգային լուսավորական իր ձեռնարկումներով քանում էր հնարավորություն տալ հայությանը «...ստեղծելու ազգի շահերին նվիրված, ազգային արժանապատվությունը օժտված հասարակություն և այդ հասարակության ուժերով հասնելու ազգային անկախության» (էջ 52)։ Առհասարակ Մ. Սաղյանը մեծ հետեղծականությամբ է ներկայացնում Պատկանյանի նպատակալաց գործունեությունը արևմտահայության ազատագրության գործի նախապատրաստման ուղղությամբ։ Սկսած Գամառ-Փաթիպա Ուխտի» հիմնադրումից, նրա ամբողջ գործունեությունն ուղղված էր այդ նպատակին, մի րան, որ հաստատում է գրքի հեղինակը և՛ Պատկանյանի գրական ստեղծագործության հմուտ վերլուծությունում, և՛ նրա թողած զրական ժառանգության նյութերով։ Այս հարցում Սաղյանին շատ է օգնում Գարրիել Պատկանյանի ձեռագիր «Եղիշատակարանը», որը հարուստ նյութ է ընձեռում հեղինակին՝ ամրապնդելու իր ենթադրությունները և հաստատելու եզրահանգումները։

Ռ. Պատկանյանի գործունեության նոր կողմերն են քաղաքացիական «Երիտասարդ Հայաստանին» նվիրված գլխում: Այդ խմբակցության մասին առաջինն արտահայտվել է Աշ. Հովհաննիսյանը՝ Կատոլիկ «Московские ведомости» թերթի ելույթների աղբյուր: Սակայն, քաղաքար փաստերը չունենալով, նա չի կարողացել ավելի հանգամանակներ ծանրանալ «Երիտասարդ Հայաստան» ե Երիտասարդ Վրաստան» կոլոված պատրաստիվի մրախ: Մ. Սաղաթն քաղաքացիականային

¹ Այս շնորհանգիստին, նախաճաշներ և նրա ժամանակը, գիրք երկրորդ, Երևան, 1956, էջ 12:

փաստերն է հրապարակում, որոնք օգնում են պատկերացում կազմելու այդ կազմակերպության գործունեության մասին: Նա թվարկում է կազմակերպության անդամներին, հայտնում նրա ծրագրի բովանդակությունը, խոսում ձեռնարկված կոնկրետ միջոցառումների մասին: Մենագրության հեղինակը «Երիտասարդ Հայաստանի» գործունեության ժամանակագրական սահմանները հասցնում է մինչև 80-ական թվականները: Հենկերությունը ընդլայնելով իր կապերը, գրում է նա, իր մեջ ընդգրկել է «...թե՛ պետերբուրգաբնակ, թե՛ մոսկովացի, թե՛ Անդրկովկասի հայ մտավորականներին և առժամանակ դադարեցրել իր աշխատանքները 1860-ական թթ. վերջերին, 80-ական թթ. «Հայասեր-Ազգասեր» խմբակցության մեջ վերածնվելու համար» (էջ 171):

Ուշագրավ և համոզիչ է հիշյալ խմբակի մասին Կատկովի ունեցած տեղեկությունների աղբյուրի վերհանման վարկածը: Ցանկալի էր միայն, որ Մ. Սաղյանը, հարցի պատմությունն ամբողջացնելու առումով, իր խոսքն ասեր «Երիտասարդ Հայաստանի» գործիչների պառակտման վերաբերյալ, ինչպես և կանգ առնելու ռուսական մամուլում Կ. Ծղյանի ունեցած ելույթների վրա, որոնք առնչվում էին կազմակերպության հետ:

Հեղինակը շրջանառության մեջ է դնում արխիվային բազմաթիվ փաստաթղթեր, կատարում բանասիրական մի շարք ճշտումներ, որոնք մեծացնում են գրախոսվող գրքի արժեքը: Այսպես, եթե մինչև այժմ «Երիտասարդ Հայաստան» խմբակի հիմնադրումը կապվում էր անցյալ դարի 60-ական թվականների հետ, ապա այժմ հեղինակը որոշակիորեն նշում է, որ այդ տեղի է ունեցել 1857 թ. սկզբին: Ծղարկվում են «Նվարիլը», «Արաբսի արտասուքը» բանաստեղծությունների գրությունը և «Ազգային երգարանի» ստեղծման ժամանակները: Առաջին անգամ Մ. Սաղյանը հրապարակում է Բաշյոնի «Վերջին ոտանավորի» պատկանյաժանական թարգմանության ընագիրը և այլն:

Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում նաև Պատկանյանի որոշ ստեղծագործությունների վերլուծությունները՝ կապված ժամանակի ռուսական գրական շարժման և ուղղությունների հետ: Մեր կարծիքով, խիստ ուշագրավ է ժողովարդան Մամիկոնյանի մահը պրեմի վերլուծությունը, որն աչքի է ընկնում հարցադրման թարմությամբ և եզրահանգումների ինքնատիպությամբ: Այստեղ է նաև, որ հեղինակը համոզիչ փաստարկներով հերքում է տասնամյակներ շարունակ մեր բանասիրության մեջ ընդունված և արդեն քաղաքացիության իրավունք ստացած այն վարկածը, թե «Վարդանի երգում» հիշատակված «գառնադղեստ գայլը» Գարբիի Ավագովսկին է: Սաղյանն, ամենայն իրավամբ, Պատկանյանի քննադատության թիրախը համարում է ներսես Աշտարակեցուն:

Գրախոսվող աշխատությունը զերծ չէ նաև մի քանի վրիպումներից: Այսպես, մեր կարծիքով, որոշ չափով հակասական է պրոֆեսոր Մկրտիչ էմինի լեզվական հայացքներին տրված գնահատականը: Հեղինակն ընդգծում է էմինի վաստակը գրական հայերենի զարգացման գործում, այնինչ մի այլ տեղ նշում է, թե նա չի հավանում Պատկանյանի առաջին բանաստեղծությունները, դրանց աշխարհաբար լեզվի պատճառով (էջ 41): Ի դեպ, վերոհիշյալ միտքը հաստատելու համար նրա վկայակոչած աղբյուրը չի ամրապնդում այդ կարծիքը: Այսպես, Պատկանյանը գրում է, թե էմինն իր աշխարհաբար բանաստեղծությունները «...կարդացել է լսարանի աշակերտաց առաջ և զանազան մեկնություններ տվել է նոցա, թե իմ միտքը կծողական է եղել»², ինչպես տեսնում ենք, այստեղ խոսքը բանաստեղծությունների լեզվի մասին է:

Մեր կարծիքով, մի փոքր գերազանցատված է Գամառ-Քաթիպա «Ուխտի» գործունեությունը, եթե մասնավոր հաջվի առնելու լինենք այն իրողությունը, որ «Ուխտը», իբրև այդպիսին, դադարում է գոյություն ունենալ իր ստեղծման հենց առաջին քայլերից: Գամառ-Քաթիպայի տեսարանների խմբագրման և սուպերության հետ կապված դժվարին աշխատանքի պատմությունը վեր է հանում միմիայն Պատկանյան-անհատի հերոսական ջանքերը, հաստատում նրա քաղաքացիական սխրանքը: Բայց որտե՞ղ էին «Ուխտի» մյուս անդամները, Հեղինակի բերած բազմաթիվ փաստերն ապացուցում են, որ նրանք բառացիորեն ոչ մի մասնակցություն չեն բերել սկսված գործին: Թեև Պատկանյանն իր նամակներում ընկերներին սթափեցնելու և գործի մեջ ներգրավելու համար շարունակ խոսում է «Ուխտի» անունից, բայց դա չի նշանակում, թե այն կար և գործում էր: Տվյալ դեպքում «Ուխտի» արժեքը սույլ նրա կազմակերպման երևույթի մեջ է, իբրև հայ հասարակական կյանքի առաջընթաց շարժման արտահայտություններից մեկը: Ինչ վերաբերում է Պատկանյանին, ապա նա բացառիկ մի գործիչ էր, որը,

«Ուխտի» ծրագրի իրականացման ամրողը ժանրությունն անհելով իր վրա, հռանդն ու տաղանդն անմնացորդ նվիրաբերում էր հայ ժողովրդի լուսավորության ու երջանկության մեծ նպատակին:

Մ. Սադյանը մի շարք արժեքավոր դիտողություններ ունի, կապված Մ. Նալբանդյանի և Պատկանյանի փոխհարաբերությունների հետ, բայց, մեր կարծիքով, այդ հարցը չի հասցվել անհրաժեշտ խորության: Մենք նկատի ունենք մասնավորապես Ռ. Պատկանյանի բանաստեղծությունների առիթով Մ. Նալբանդյանի գրած երկու պարոդիաների հարցը, որը դուրս է մնացել հեղինակի տեսադաշտից և որի քննումը անուղղակիորեն կօգներ վեր հանելու նաև արևմտահայության ազատագրական պայքարի պատկանյանական ծրագրի աջն ու ահլակը:

Այնուհետև, Պատկանյանի կապերը «Փոքրձի» շրջանակի գործիչների հետ շատ ավելի սերտ են եղել, քան այդ մասին խոսվում է մենագրության մեջ: Այդ գործիչները և անձամբ Արզար Հովհաննիսյանը քիչ դեր չեն կատարել Պատկանյանի պոեզիայի ժողովրդականացման գործում: «Փոքրձի» խմբագրությունն է տպագրել Պատկանյանի բանաստեղծությունների գրքույկը՝ և դրա հարյուրավոր օրինակներն ուղարկել Արևմտյան Հայաստան՝ տեղի հայության մեջ դրանք տարածելու համար: Հովհաննիսյանն է ազատասիրական այդ բանաստեղծությունների շարքն անվանել «Ազատ երգեր» և ամենախանդավառ տողերով շատագուրվել այն:

Ի դեպ, «Փոքրձի» կապակցությամբ հեղինակը թույլ է տվել մի փոքր անճշտություն: Նա գրում է, որ 1877/1878 թթ. № 3, 4-ում Պատկանյանի 22 բանաստեղծություններից տպագրվել են 10-ը, ընդ որում դուրս են մնացել «Վանեցոց աղոթքը», «Վանեցի մոր երգը», «Վանեցի կտրիճը» և այլ բանաստեղծություններ (էջ 279): Իրականում հանդեսի այդ համարներում տպագրվել են 13 բանաստեղծություն, որոնց թվում և վերոհիշյալ երեքը: Նշենք, որ առհասարակ «Փոքրձի» էջերում տպագրվել են Պատկանյանի 33 բանաստեղծություն:

Վերը հիշված դիտողությունները ընավ չեն նսեմացնում «Ռափայել Պատկանյան» մենագրության արժանիքները: Այն գրված է գիտական բարեխղճությամբ, չեմք շնչով և միանգամայն նորովի է ներկայացնում բանաստեղծ-քաղաքացու և՛ գրական ստեղծագործության պատմությունը, և՛ ապրած բուռն կյանքի ամրողական պատկերը:

ՄԱՐԳՈ ՄԵԻՔԱՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների քննաձույն: